Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 20-ի N 663 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 3-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

ԱՊՀ երկրների տնտեսական խորհրդի որոշմամբ՝ 2011 թվականի հունիսի 28-ից հուլիսի 3-ը Մոսկվա քաղաքի Համառուսաստանյան ցուցահանդեսային կենտրոնում կկայանա Անկախ պետությունների համագործակցության 20-ամյակին նվիրված միջպետական ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին մասնակցող ԱՊՀ անդամ պետությունների խնդիրն է լինելու ներկայացնել իրենց մշակույթը, պատմությունը, տնտեսական և մտավոր ներուժը: Ցուցահանդեսը կնպաստի հետագա առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը, մրցունակ ապրանքների և ծառայությունների առաջխաղացմանը, նոր հորիզոններ կբացի գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության արդի ուղղությունների քննարկման և էներգետիկայի, տրանսպորտի, զբոսաշրջության, բնապահպանության և այլ ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը հանդիսանում է Անկախ պետությունների համագործակցության 20-ամյակին նվիրված միջպետական ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության գլխավոր հանձնա-

կատար, իսկ «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն՝ Անկախ պետությունների համագործակցության 20-ամյակին նվիրված միջպետական ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ազգային օպերատոր, որը կիրականացնի ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ապահովելու նախապատրաստական աշխատանքները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության նախարարությունների և ռուսական կողմի կազմակերպիչների հետ:

2. ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Մոսկվայում կայանալիք Անկախ պետությունների համագործակցության 20-ամյակին նվիրված միջպետական ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը պատշաճ մակարդակով ապահովելու նպատակով կներգրավվեն շահագրգիռ նախարարությունները, այդ թվում՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
- ՀՀ մշակույթի նախարարություն
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
- այլ շահագրգիռ կառույցներ:

Ցուցահանդեսը բաղկացած կլինի մշակութային և գործարար մասերից, որոնց ընթացքում կներկայացվեն Հայաստանի Հանրապետության մրցունակ սպառողական ապրանքներն ու ծառայությունները, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, զբոսաշրջության, գիտության, կրթության և մշակույթի, տրանսպորտի, էներգետիկայի ոլորտների վերջին

նվաճումները, առաջիկայում նախատեսվող ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրը:

Ցուցահանդեսի գործարար ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել և անցկացնել՝

- հումանիտար համաժողով՝ «Երիտասարդ սերունդ-կյանքն առանց սահմանների» խորագրով: Համաժողովի նպատակն է ակտիվացնել ԱՊՀ երկրների երիտասարդական համագործակցությունը, ինչպես նաև մշակել երիտասարդների նորարական մտքի և գործունեության պետական աջակցման և խթանման համակարգ: Համաժողովի շրջանակներում կկազմակերպվեն կլոր սեղաններ և սեմինարներ:
- ինովացիոն համաժողով՝ մասնակից երկրների գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության նախագծերի և ծրագրերի քննարկման նպատակով:
- էներգետիկ ոլորտին առնչվող համատեղ ծրագրերի շնորհանդես:

3. ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի տաղավարի համար հատկացվելու է 203 քառ. մետր տարածք: Ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ծախսը կկազմի 24667428 դրամ: Այս գումարների շրջանակում իրականացվելու են ցուցահանդեսի տաղավարի վարձակալման, նախագծման և ձևավորման աշխատանքները, տեխնիկական միջոցների, անհրաժեշտ գովազդային նյութերի և ցուցանմուշների ձեռքբերման, ցուցահանդեսին մասնակցության, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը:

Ցուցահանդեսի նախապատրաստման և մասնակցության համար ֆինասավորումը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

4. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Շահագրգիռ նախարարությունները, գերատեսչությունները և այլ կազմակերպություններ աջակցում են ԱՊՀ 20-ամյակին նվիրված միջպետական ցուցահանդեսին՝ իրենց ոլորտին վերաբերող անհրաժեշտ ցուցանմուշներ ու լրատվական նյութեր տրամադրելով, ինչպես նաև «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությանը նախօրոք տրամադրում են ցուցանմուշների ցանկերը, չափսերը, քաշը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն տաղավարի ընդհանուր ձևավորման, տեղափոխման նախնական հաշվարկների իրականացման նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն կաջակցի ցուցանմուշների տեղափոխման հետ կապված մաքսային ձևակերպումների իրականացմանը:

5. ՀԵՏՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Ցուցահանդեսի ավարտից հետո ազգային օպերատորի կողմից կիրականացվի համապատասխան փաստաթղթերի ստորագրում, ակտերի կազմում և վերադարձվելիք ցուցանմուշների առաքում Հայաստան:

6. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

«Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը ցուցահանդեսի նախապատրաստական փուլում տաղավարի նախագծման և ձևավորման աշխատանքներն իրականացնելու, ընթացիկ աշխատանքները կանոնակարգելու, ինչպես նաև ցուցահանդեսի ընթացքում հայաստանյան տաղավարում աշխատանքների վարման նպատակով կգործուղի «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության 3 աշխատող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ